



2015 թվականի դեկտեմբերի 6-ին ՔՀԻ ՀԿ
կողմից իրականացված ՀՀ
սահմանադրության փոփոխությունների
հանրաքվեի դիտորդական առաքելության

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Անփոփագիր	3
Ներածություն.....	4
Ընդհանուր դիտարկումներ.....	5
Թեժ գիծ.....	6
Հանձնաժողովների կազմը և աշխատանքը	7
Կենտրոնական ընտրական հանձնաժողովը.....	9
Դիտորդների նկատմամբ վերաբերմունքը և աշխատանքային մթնոլորտը	10
Քվեարկության օրը	12
Քվեարկության բացում.....	12
Քվեարկության ընթացքը	13
Քվեաթերթիկների հաշվարկը.....	18
Խախտումների վերաբերյալ քննության իրականացում	20
Եզրակացություն	23
Առաջարկություններ	24

Անփոփագիր

2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեն արդեն երրորդ փորձն էր փոփոխելու ՀՀ մայր օրենքը¹: Ինչպես և մինչ օրս ՀՀ-ում տեղի ունեցած այլ ընտրական գործընթացներն, այս հանրաքվեի ընթացքում ևս արձանագրվեցին ընտրական բազմաթիվ խախտումներ: Թեև նախատեսվում էր արմատապես փոփոխել Սահմանադրության զգալի մասը, բավարար ժամանակ չէր տրամադրվել փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններով հանդես գալու կամ լիարժեք կարծիք կազմելու համար: Ամբողջ գործընթացը կազմակերպվել էր հապճեպ, ինչն առաջացրել էր հասարակության որոշ մասի դժգոհությունը:

Քաղաքացիական հասարակության ինստիտուտ հասարակական կազմակերպությունը (ՔՀԻ ՀԿ) 2007թ.-ից դիտորդական առաքելություն է իրականացնում ՀՀ-ում: 2015 թվականի դեկտեմբերի 6-ին կայացած ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի օրը ՔՀԻ ՀԿ-ն դիտորդական առաքելություն է իրականացրել թիվ 1 ընտրատարածքում, որն ընդգրկում էր Ավան վարչական շրջանը և Նոր Նորքի մի հատվածը: ՔՀԻ դիտորդները տեղամասերում հերթափոխով աշխատել են առավոտյան 07:30-ից մինչև ձայների հաշվարկի ավարտը: Գործել է նաև անվճար իրավական խորհրդատվության 080 080 804 թեժ գիծը, իսկ դիտորդներից խախտումների մասին հաղորդագրությունները ստանալուց անմիջապես հետո հրապարակվել են ՔՀԻ ֆեյսբուքյան պաշտոնական էջում (www.facebook.com/csi.arm) և Մարդու իրավունքները Հայաստանում կայքում (www.hra.am/hy/events/2015/12/06/referendum):

ՔՀԻ անունից որպես դիտորդ հավատարմագրվել էր 79 անձ, որոնց թվում կային ինչպես փորձառու դիտորդներ, ովքեր արդեն չորրորդ-հինգերորդ անգամն էին դիտորդական առաքելություն իրականացնում, այնպես էլ անձինք, ում համար դա առաջին փորձն էր:

Քվեարկության օրը ՔՀԻ դիտորդների կողմից արձանագրվել էին խախտումների և ընտրական գործընթացի վրա ստվեր գցող բազմաթիվ դեպքեր, այդ թվում՝ լայնածավալ ուղղորդումներ, բազմակի քվեարկության փորձեր, այլ անձանց փոխարեն քվեարկելու դեպքեր, կեղծ հաշվարկներ, դիտորդների նկատմամբ սպառնալիքներ և այլն:

Արձանագրված դեպքերով իրավապահ մարմինների կողմից 32 նյութ է նախապատրաստվել, սակայն դրանց մեծ մասով քրեական գործի հարուցումը մերժվել է:

Սույն զեկույցում ամփոփված են դիտարկման արդյունքները և ներկայացված են օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի բարեփոխման առաջարկություններ:

¹ Տեղի է ունեցել երկու հանրաքվե՝ 2005թ. և 2015թ., և մեկ հանրաքվեի փորձ՝ 2003թ.-ին:

Ներածություն

ՔՀԻ-ն 2007 թվականից մասնագիտացած է ընտրությունների մոնիտորինգի և ընտրական իրավունքի պաշտպանության ոլորտում: Կազմակերպությունը դիտորդական առաքելությամբ մասնակցել է 2007 և 2012 թվականների խորհրդարանական, 2008 և 2013 թվականների նախագահական, 2009 և 2013 թվականների Երևան քաղաքի ավագանու ընտրություններին՝ նպատակ ունենալով հասարակության իրազեկվածության բարձրացման և իրավական աջակցության տրամադրման միջոցով նպաստել ժողովրդավար ընտրությունների կայացմանը ՀՀ-ում:

Դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեին ընդառաջ ՔՀԻ-ն հավաքագրել է դիտորդների թեկնածուներ, որոնք անցել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) կողմից կազմակերպված վերապատրաստումը և ստացել են դիտորդի հավատարմագիր: Ընդհանուր առմամբ, ՔՀԻ-ի անունից հանդես է եկել 79 դիտորդ, որոնք աշխատել են թիվ 1 ընտրատարածքի տեղամասերում, շրջիկ մեքենաներում կամ ՔՀԻ գրասենյակում: Յուրաքանչյուր ընտրատեղամասում հերթափոխով աշխատել է երկու դիտորդ. մեկն ընտրատեղամասի բացումից մինչև ժամը 16:00, մյուսը՝ 16:00-ից մինչև քվեների հաշվարկի ավարտը և արձանագրության կազմումը: Դեկտեմբերի 6-ին աշխատել են նաև երկու շրջիկ մեքենաներ, յուրաքանչյուրում մեկ դիտորդ և մեկ իրավաբան: Նշված մեքենաները քվեարկության ամբողջ օրվա ընթացքում շրջել են ընտրատարածքի բոլոր տեղամասերով՝ արձանագրելով խախտումները և ընտրատեղամասերում աշխատող դիտորդներին ապահովելով խորհրդատվությամբ, մասնագիտական և հոգեբանական աջակցությամբ: Եվս 3 իրավաբան աշխատել են ՔՀԻ գրասենյակում՝ ապահովելով թե՛ զծի աշխատանքը, գրանցելով քաղաքացիների և դիտորդների արձանագրած խախտումները, իրավաբանական խորհրդատվություն տրամադրել դիտորդներին, ընտրական գործընթացին մասնակցող այլ անձանց և քաղաքացիներին:

Դիտարկման արդյունքներն ու գործընթացն արձանագրելու համար օգտագործվել են ՔՀԻ պատրաստած հետևյալ գործիքները.

- Քվեարկության օրը ընտրատեղամասի ներսի դիտարկման քարտ,
- Քվեարկության օրն ընտրատեղամասի շրջակայքի դիտարկման քարտ,
- Քվեների հաշվարկի դիտարկման քարտ:

Բացի այդ, կիրառվել են տեսաձայնագրման և լուսանկարման սարքեր՝ արձանագրելու խախտումները: Դիտորդները հիմնականում հնարավորություն են ունեցել նկարահանել ողջ գործընթացը և նյութերը փոխանցել ՔՀԻ: Դիտորդները նկարահանել են խախտում պարունակող կամ կասկածելի թվացող իրավիճակները: Տեսանյութ կամ լուսանկար ուղարկելու և տեղադրելու գործընթացը լավ կազմակերպած էր և շատ արդյունավետ: Լուսանկարների և տեսագրությունների մի մասը տեղադրվել է Մարդու իրավունքները Հայաստանում (www.hra.am) ինտերնետային կայքում, որի միջոցով ամբողջ օրվա ընթացքում իրականացվում էր ընտրական գործընթացի անընդհատ թարմացվող լուսաբանում: ՔՀԻ

հրապարակած տվյալներն ակտիվորեն տարածվում էին այլ ՁԼՄ-ների կողմից: Բացի այդ, նյութերն արագ տեղադրվում էին սոցիալական ցանցերում, տարածվում էին առցանց ՁԼՄ-ների միջոցով, որոնց հետևում էին նաև ԿԸՀ-ն, նաև ընտրատեղամասային հանձնաժողովի անդամները, նաև Գլխավոր դատախազությունը: Դա թույլ էր տալիս ոչ միայն արձանագրել արդեն տեղի ունեցածն, այլ նաև հնարավորություն էր տալիս կանխել հանձնաժողովի անդամների և այլ անձանց կողմից հնարավոր խախտումները:

Քվեարկության օրը դիտորդների հետ մշտական կապի պահպանումից և նրանցից տեղեկությունների հավաքագրումից բացի, դիտորդական առաքելության արդյունքների ամփոփման նպատակով ՔՀԻ ՀԿ-ն դեկտեմբերի 12-13-ը կազմակերպել էր քննարկում՝ իր անունից հանդես եկող բոլոր դիտորդների և իրավաբանների մասնակցությամբ: Նշված քննարկումը հնարավորություն տվեց լիարժեքորեն վերհանել հանրաքվեի ընթացքում արձանագրված խախտումները և համակարգել առկա տեղեկատվությունը:

Ընդհանուր դիտարկումներ

ՀՀ անկախության 24 տարիների ընթացքում Հայաստանում չորս անգամ բարձրացվել է Սահմանադրության ընդունման/փոփոխման հարցը, և երեք անգամ անցկացվել է հանրաքվե: Բոլոր հանրաքվեների ընթացքում արձանագրվել են բազմաթիվ խախտումներ, որոնք ստվեր են գցել Սահմանադրության ընդունման օրինականության և այդ փաստաթղթի լեգիտիմության վրա: Բացառություն չէր նաև 2015թ. դեկտեմբերի 6-ին անցկացված հանրաքվեն, որի ժամանակ թույլ տրվեցին բազմաթիվ խախտումներ ինչպես հանրաքվեի հանձնաժողովների անդամների, այդպես էլ սահմանադրական փոփոխությունները նախաձեռնած խմբի համակիրների, ընտրատեղամասերի վարչական տարածքի բնակիչների կողմից:

Այս հանրաքվեի առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ սահմանադրության փոփոխությունների էության և մանրամասների վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածության մակարդակը ցածր էր՝ չնայած իրականացված քարոզարշավներին: Հանրաքվեն կազմակերպվել էր սեղմ ժամկետում, ինչը թույլ չէր տվել հասկանալ առաջարկվող փոփոխությունների էությունը: Արդյունքում քաղաքացիների մեծամասնությունը ոչ թե կողմ կամ դեմ էր արտահայտվում նոր Սահմանադրությանը, այլ «Այո» քվեարկելով համաձայնություն էր հայտնում, իսկ «Ոչ» քվեարկելով անհամաձայնություն էր հայտնում գործող իշխանության քաղաքականությանը:

Հայաստանի ընտրական գործընթացներում նախկինում ևս ներգրավված դիտորդների կարծիքով՝ դեկտեմբերի 6-ի հանրաքվեն խախտումների և կեղծիքների առումով աննախադեպ էր: Արձանագրվել է, որ ինչպես հանրաքվեից առաջ, այնպես էլ քվեարկության օրը ընտրողների հետ «Այո» քվեարկելուն ուղղված անհատական «քարոզչական» աշխատանք են իրականացրել տարատեսակ սուբյեկտներ, այդ թվում՝ տարածքի դպրոցների, մանկապարտեզների, համատիրության աշխատակիցները, թաղամասի շահագրգիռ/որոշ շրջանակներում հեղինակություն վայելող բնակիչները: Ընդհանուր առմամբ, հանրաքվեի

ընթացքում խախտումների կազմակերպիչները կամ հեղինակները գործել են շատ բացահայտ և անպատժելիության մթնոլորտում:

Տպավորությունն այնպիսին էր, որ քվեարկության ցանկալի արդյունք ապահովելու համար նախապատրաստական աշխատանքներ էին տարվել դեռևս քվեարկությունից առաջ: Այդպես, դատելով ՔՀԻ թեժ գծին ստացած ահազանգերից և քվեարկության օրը դիտարկման արդյունքներից՝ կարելի է արձանագրել, որ մարդկանց ընտրատեղամասեր բերելը և ուղղորդելն իրականացվել է հետևյալ հիմնական մեթոդներով՝ քաղաքացիներին տարբեր խոստումներ տալու, ծառայություններ մատուցելու կամ բարեկամաբար խնդրելու, որոշ դեպքերում աշխատանքից ազատելու կամ այլ սպառնալիքի միջոցով հորդորում էին անպայման մասնակցել քվեարկությանը, քվեարկել «Այո» և տեղեկացնել դրա մասին: Բացի այդ, հաճախ քաղաքացիներին ընտրատեղամաս ուղեկցում էին համապատասխան անձինք, հեռվից հետևում, որ նա քվեարկի, և, այնուհետև, միասին հեռանում:

Ընտրատեղամասերի տեղակայման հետ կապված՝ թիվ 1 ընտրատարածքում արձանագրվել են հետևյալ խնդիրները.

- Ապահովված չէր ընտրատեղամասերի հասանելիությունը հենաշարժական խնդիրներ ունեցող քաղաքացիների համար: Ոչ մի տեղամասում չկար թեքահարթակ, իսկ որոշ ընտրատեղամասեր գտնվում էին երկրորդ հարկում:
- Որոշ ընտրատեղամասերում շատ ցուրտ էր, ջեռուցման համակարգերը բավարար չէին մեծ տարածքները տաքացնելու համար:
- Ընտրատեղամասերից մեկի հարակից տարածքը բոլորովին մաքրված չէր սառույցից, ինչի պատճառով դժվար հասանելի էր և վտանգավոր մարդկանց համար:
- Որոշ տեղամասերում դիտորդության իրականացնելու համար անհրաժեշտ տեսադաշտը սահմանափակ էր, ինչը խոչընդոտում էր տեղամասի հարակից տարածքը լիարժեքորեն դիտարկելը. *Դիտորդ - «Եթե մեքենաներ գային, ես չէի կարող տեսնել, քանի որ մեծ դարպասով պատ կար, որի հետևը կարող էին կանգնել»:*
- Որոշ ընտրատեղամասերի շենքերը դիտորդները դժվարությամբ են գտել: Բացի այդ, գիշերն ընտրատեղամասերի հարակից փողոցները լուսավորված չէին, ինչը լրացուցիչ խնդիրներ է ստեղծել ընտրատեղամասից դուրս գալուց հետո:

Թեժ գիծ

Մինչև հանրաքվեն, հանրաքվեի օրը (դեկտեմբերի 6-ին) և հանրաքվեին հաջորդող օրերին ՔՀԻ-ում գործել է ընտրական գործընթացի հետ կապված իրավական հարցերի շուրջ խորհրդատվություն տրամադրող թեժ գիծը 080 080 804 համարով, որին ահազանգեր են ստացվել հանրապետության տարբեր բնակավայրերից:

Մինչև քվեարկության օրը ստացվել են բազմաթիվ զանգեր, որոնց մի մասն ընտրական իրավունքի իրացմանն էր վերաբերում, մյուս մասը՝ Սահմանադրական փոփոխությունների տեքստի անհասանելիությանը: Բացի այդ, քաղաքացիներն ահազանգում էին (հիմնականում Երևան քաղաքի բնակիչները), որ հանրաքվեի անցկացման օրվանից առաջ իրենց շենքերի լիազորված անձինք այցելում են իրենց բնակարաններ, ճշտում, թե արդյոք մասնակցելու են հանրաքվեին, քվեարկության օրը լինելու են բնակության վայրում, իսկ որոշ դեպքերում նաև փորձում տեղեկանալ, թե ինչպես են պատրաստվում քվեարկել՝ «այո» թե «ոչ»: Ահազանգեր են եղել նաև բնակիչների անձնագրային տվյալների արձանագրման դեպքերի վերաբերյալ:

Քվեարկության օրը թեժ գծին ստացված ահազանգերի հիմնական մասը վերաբերում էին ցուցակների անճշտությանը կամ այլ անձանց փոխարեն քվեարկության դեպքերին, մասնավորապես, ընտրական ցուցակներում նշված հասցեով չհաշվառված անձանց առկայությունը, հանրապետությունից բացակայող (և ոչ միայն) քաղաքացիների անվան դիմաց լրացված տվյալների առկայությունը, քվեարկողներին և դիտորդներին ճնշումների ենթարկելուն և այլն: Հասկանալի է, որ քաղաքացիներից բացի թեժ գիծ են զանգահարել նաև վստահված անձինք՝ ստանալու իրենց իրավունքների վերաբերյալ պարզաբանում և/կամ տեղեկություն հաղորդելու արձանագրված խախտումների վերաբերյալ:

Հանձնաժողովների կազմը և աշխատանքը

Քվեարկության օրն իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ հանրաքվեն նախաձեռնած խմբի համար ցանկալի արդյունք ապահովելու մեջ իրենց զգալի բաժինն են ունեցել հանձնաժողովները և տվյալ վարչական տարածքում հեղինակություն/ազդեցություն ունեցող անձինք:

Դիտորդների կարծիքով՝ տարբեր կուսակցությունների վստահված անձինք, այդ թվում նաև ընդդիմադիր ուժերի որոշ ներկայացուցիչներ (օրինակ «Ժառանգություն» կուսակցությունից), *«իշխանության համար էին աշխատում»*: *«Ընդդիմադիր կեցվածք»* ունեին և հանրաքվեի օրինականությունը փորձում էին պահպանել Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) որոշ ներկայացուցիչներ, մյուսները համագործակցում էին միմյանց հետ: Ընդդիմադիր կուսակցություններում մարդկային ռեսուրսների սղության պատճառով ընդդիմությունը բավարար չափով ներկայացված էր ոչ բոլոր ընտրատեղամասերում:

Ինչ վերաբերում է հանձնաժողովների անդամներին և նախագահներին, ապա նրանք, ընդհանուր առմամբ, անկախ կուսակցական պատկանելիությունից, գործում էին որպես Սահմանադրության փոփոխությունները նախաձեռնած խմբին սատարող և այդ թիմի անդամ, ով հակված չէ արձանագրել խախտումները:

«Մի մարդ սխալ կողմից ներս մտավ, բոլորը խառնվեցին իրար: Այդ մարդն ասաց՝ «եկել եմ «Ոչ»-ս ասեմ ու գնամ»: Հանձնաժողովի անդամները պատասխանեցին՝ *«դե կարաս գնաս, էլ կարաս չքվեարկես, այստեղ բոլորը «Այո» են»*:

Թիվ 1 ընտրատարածքի ընտրատեղամասային հանձնաժողովների անդամները հիմնականում տվյալ տարածքի դպրոցի կամ մանկապարտեզի տնօրեններն էին, աշխատակիցները, համատիրության նախագահը կամ աշխատակիցներն, ինչպես նաև՝ տարածքի այլ մարմիններում աշխատող անձինք, որոնցից բնակիչները, մասնավորապես տարեցներն, այսպես թե այնպես, կախվածության մեջ են: Որպես հետևանք, նշված հանձնաժողովների անդամների իրականացրած ոչ ֆորմալ քարոզչությունն ազդել է ընտրողների ազատ կամարտահայտման վրա: Շատերը մտավախություն ունեին, որ եթե չքվեարկեն «քարոզող» անձի համար ցանկալի տարբերակով, ապա դա իրենց վրա որոշակի բացասական հետևանք կունենա հետագայում, այդ թվում՝ սոցիալական բնույթի հարցեր լուծելիս: Այդ ռիսկն իրական էր թվում, քանի որ քվեարկողները գիտեին, որ տվյալ անձը լինելու է հանձնաժողովի կազմում և կիմանա, քաղաքացին մասնակցել է քվեարկությանը, թե՛ ոչ, իսկ որոշները նաև հավատում էին, որ նրանք կիմանան, թե իրենք ինչպես են քվեարկել: Ընտրողների ազատ կամարտահայտման նման խախտումները դժվար է ապացուցել և մեղավորներին պատասխանատվության ենթարկել, քանի որ կողմերից ոչ մեկ չի հաստատի դա, իսկ միայն դիտորդի դիտարկումներն, ինչպես ցույց տվեց իրավապահ մարմինների մոտեցումը, դեռևս բավարար չէ քննություն սկսելու համար: Անգամ այն դեպքերում, երբ դիտորդներն արձանագրում էին ընտրական կոպիտ խախտում, օրինակ, քաղաքացու անվան դիմաց լրացված այլ անձի տվյալներ, և մոտենում էին քվեարկողներին պարզաբանում ստանալու համար, նրանք վախենում էին և հեռանում: Իսկ հանձնաժողովի նախագահը և անդամները կա՛մ հայտարարում էին, որ դիտորդին թվացել է, կա՛մ ոչ համոզիչ հիմնավորում էին ներկայացնում:

Հատկանշական է, որ քվեարկության օրը հանձնաժողովները կարծես թե կաշկանդված էին «Այո»-ի հաղթանակն ապահովելու հանձնարարությամբ: Օրինակ, ընտրատեղամասերից մեկում, որտեղ ավելի շատ ձայն էր հավաքել «Ոչ»-ը, հանձնաժողովի անդամները նման միտք են հնչեցրել. «Պիտի չհավատալինք խոստումներին, որ «Այո» կքվեարկեն: Ոչինչ, հլը կգան այդ շենքերի բնակիչները, ինչ-որ բան պետք կլինի իրանց, կտեսնեն՝ ինչը ոնց է»: Կամ եթե իմանում էին, որ ընտրատարածքի այլ տեղամասերում նույնպես «Ոչ»-երի թիվը գերազանցում է «Այո»-ներին, մխիթարվում էին, ասելով՝ «լավ է, գոնե մենակ մեզ մոտ չի այդպես»:

Դիտորդների գնահատմամբ, ընդհանուր առմամբ, վստահված անձինք ու հանձնաժողովի անդամները լարված մթնոլորտում են աշխատել. նրանց անընդհատ զանգահարում էին, թվեր էին ճշտում, պահանջներ էին ներկայացնում: Ոմանք դուրս էին գալիս, մեքենայով հեռանում, հետո վերադառնում: Այն դեպքերում, երբ քվեարկության եկած քաղաքացիների թիվն ակնկալվածից ցածր էր, հանձնաժողովների նախագահներն ու անդամները սկսում էին անհանգստանալ: Ոմանք անգամ վախենում էին, որ իրենց գործից կհեռացնեն, եթե «Ոչ»-ը հաղթի իրենց ընտրատեղամասում:

«Օրվա երկրորդ կեսին հանձնաժողովի նախագահը սկսեց լարվել, քանի որ 1900 ընտրողից եկել էր ընդամենը 500-ը: Նա շատ կատաղած էր, ասում էր՝ ես ի՞նչ թիվ եմ տալու»:

Լարված մթնոլորտը պահպանվում էի նաև քվեաթերթիկների հաշվարկի ժամանակ. Անընդհատ զանգահարում էին, հաշվարկի ընթացիկ թվերը ճշտում, ինչը դժվարացնում էր աշխատանքը:

Բացի այդ, արձանագրվել է մեկ այլ մտահոգիչ խնդիր ևս: Նույն հանձնաժողովում ներգրավված են եղել նույն պետական կառույցի մի քանի աշխատակից, որից մեկը հանդիսացել է մյուսների վերադասը: Նման իրավիճակը հանգեցնում է հանձնաժողովների անդամների կաշկանդված աշխատանքին, երբ նրանք չեն կարողանում հակադրվել իրենց ղեկավարին կամ արձանագրել նրա կողմից կատարված խախտումները:

Խնդիրներ են արձանագրվել նաև հանձնաժողովների իրազեկվածության ցածր մակարդակի հետ կապված: Քվեարկության օրը ոչ բոլոր հանձնաժողովների նախագահները և անդամներն էին իրազեկ իրենց գործառույթներին, երբեմն այլ անդամների գործառույթներ էին կատարում, ծանոթ չէին ընթացակարգերին: Որոշ ընտրատեղամասերում յուրաքանչյուր գործողություն կատարելուց առաջ ընթերցում էին ուղեցույցը: Ոչ ստանդարտ իրավիճակներում խուճապի էին մատնվում, խորհուրդ էին հարցնում դիտորդներից: Օրինակ՝ անձնագրային բաժնի տեղեկանքներով քվեարկողներ կային տարբեր ընտրատեղամասերում, սակայն ոչ բոլոր ընտրատեղամասերում էին ծանոթ այդ ընթացակարգին, հարցնում էին՝ «*բա հիմա այս տեղեկանքները ի՞նչ անենք*»: Եղել են դեպքեր, երբ միայն դիտորդի կողմից խնդիրը բարձրաձայնելուց հետո էր շտկվում իրավիճակը և ապահովվում սահմանված կարգը:

Որոշ ընտրատեղամասերում, որտեղ պատրաստակամ էին դիտորդի պահանջով գրանցել արձանագրված խախտումը, հանձնաժողովի նախագահը և քարտուղարը բավարար չափով իրազեկված չէին, թե գրանցամատյանի որ տողում/էջում պետք է կատարվի այդ գրառումը:

Դիտարկումները ցույց են տվել, որ չի գործել ընտրողներին օգնող անձանց հաշվառման միանման կարգ: Հանձնաժողովի անդամները որոշ դեպքերում չէին գրանցում ընտրողներին օգնող անձանց տվյալները, որոշ դեպքերում գրանցում էին միայն ձևաթղթի դաշտերը՝ օգնողի անուն-ազգանունը և անձնագրի համարը, իսկ որոշ դեպքերում էլ այս տվյալներից բացի նաև այլ մանրամասներ՝ ում են օգնում, ինչ պատճառով,

ժամը և այլն: Ի դեպ, ԿԸՀ-ի մշակած ձևաթուղթը չի երաշխավորում լրացված տվյալների արժանահավաստությունը, քանի որ չի ներառում տեղեկություն, թե ում և ինչու է ցուցաբերվում օգնություն, ինչպես նաև վերահսկելի չէ, արդյո՞ք բոլոր դեպքերն են գրանցվում, թե՛ ոչ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Հանրաքվեի օրը ԿԸՀ-ն գործարկել էր թեժ գիծ, որն օրվա ընթացքում գրեթե հասանելի չի եղել: Սակայն, այն հազվադեպ դեպքերում, երբ հաջողվում էր կապ հաստատել և հաղորդել ԿԸՀ-ին խնդրի մասին, վերջինս իրավիճակը շտկելու ուղղությամբ արագ քայլեր էր ձեռնարկում: Բացի այդ, արձանագրվել է, որ ԿԸՀ թեժ գծի համար պատասխանատու աշխատակիցները դեկտեմբերի 6-ին հասանելի չէին մինչև 07:50-ը: Այդպես, երբ ՔՀԻ դիտորդի մոտ խնդիր էր

առաջացել՝ կապված մինչև ժամը 08:00-ն ընտրատեղամաս մուտք գործելու հետ, և կազմակերպությունը փորձել էր կապ հաստատել ԿՀՀ հետ խնդրին պատշաճ լուծում տալու համար, պարզվել է, որ ժամը 07:30-ի դրությամբ ԿՀՀ համապատասխան աշխատակիցները տեղում չեն, և ՔՀԻ-ին առաջարկվել է ավելի ուշ զանգահարել: ՔՀԻ-ն հաջողվել է թեժ գծի պատասխանատու աշխատակցի հետ կապ հաստատել միայն ժամը 07:50-ին, ինչից հետո խնդիրը լուծվել է:

Հատկանշական մեկ փաստ ևս: Քվեարկության օրը ԿՀՀ նախագահ Տ.Մուկույանը շրջել է թիվ 1 ընտրատարածքի տեղամասերում, իսկ ավելի ուշ ասուլիսի ժամանակ հայտարարել է, որ ժամը 14:00-ի դրությամբ այնտեղ որևէ խախտում չի արձանագրվել: *«Ես անձամբ շրջում եմ մայրաքաղաքի ընտրատեղամասերում: Արդեն եղել եմ Նոր Նորքի եւ Ավանի ընտրատեղամասերում, զրուցել դիտորդների, վստահված անձանց հետ: Բոլոր ընտրատեղամասերում էլ դիտորդներ կան, որոնց հետ անձամբ խոսել եմ, իրենք ինձ փոխանցել են, որ ընտրախախտումներ չեն հայտնաբերել»*², - ասել է Մուկույանը:

Մինչդեռ ՔՀԻ դիտորդները, երբ հանդիպել են Տ.Մուկույանին, վերջինիս տեղեկացրել են գրանցված խախտումների մասին, որոնք նաև հրապարակված են եղել ՔՀԻ կայքում, տարածվել սոցիալական ցանցերով, արտատպվել այլ ՁԼՄ-ների կողմից:

Դիտորդների նկատմամբ վերաբերմունքը և աշխատանքային մթնոլորտը

Քվեարկության օրը թիվ 1 ընտրատարածքի որոշ ընտրատեղամասերում բացի ՔՀԻ դիտորդներից եղել են նաև այլ կազմակերպություններ ներկայացնող դիտորդներ, մասնավորապես մեկական դիտորդ և լրագրող «Ասպարեզ» կազմակերպությունից և մեկ դիտորդ «Թրանսփերենսի ինթերնեյշնլ» կազմակերպությունից: Որոշ դիտորդներ ներկայանում էին որպես «Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ, սակայն այժմ էին ընկնում ակնհայտ կողմնակալ վարքով:

«Մեկը հաց էր բերում հանձնաժողովի անդամներին և իրեն ներկայացնում էր որպես «սպասարկող անձնակազմ»: Ես հասկացել էի, որ նա ուղղորդող անձ է և բոլորին այդտեղ ճանաչում է: Մեկ էլ ժամը 7-ին գցում է ինչ-որ դիտորդի բեյջ և հայտնվում է որպես դիտորդ: Ես նայում եմ ապշած և ասում եմ՝ սպասարկող անձնակազմից վերափոխվեցիք դիտորդի՞ : Ասում է՝ ես «Ազատ հասարակության ինստիտուտի» դիտորդ եմ»:

Որոշ ընտրատեղամասերում, բացի ՔՀԻ դիտորդից, այլ դիտորդ ներկա չի եղել:

Դիտորդների նկատմամբ վերաբերմունքը տարբեր տեղամասերում տարբեր է եղել: Որոշ ընտրատեղամասերում հանձնաժողովի անդամները դիտորդի հետ ամբողջ ընթացքում հեզմանքով էին խոսում, ճնշում էին գործադրում, փորձում էին վախի մթնոլորտ ստեղծել, մյուսներում՝ փորձում էին սիրաշահել: Գրեթե բոլոր ընտրատեղամասերում հանձնաժողովի

² Տե՛ս <http://news.am/arm/news/300331.html>

անդամները և վստահված անձինք դիտորդներին առաջարկում էին սուրճ, թեյ, խորոված և այլն՝ փորձելով շեղել նրանց ուշադրությունը: Դիտարկումների համաձայն՝ արական սեռի դիտորդների նկատմամբ ավելի շատ էին ճնշում գործադրում, և նրանց համար ավելի դժվար էր դիտորդական առաքելություն իրականացնելը:

«Հանձնաժողովի անդամն ասաց՝ ջահել աղջիկ ես, չես էլ ամաչում, գործ ես տալիս»:

«Հայ աղջիկն ի՞նչ գործ ունի քաղաքականության հետ»:

Իգական սեռի դիտորդներին հանձնաժողովի անդամները փորձում էին շեղել նաև սիրաշահելով:

«Սկսեցին սիրաշահել՝ մազերիդ գույնը ինչ լավն է, շատ բարեհամբույր էին»:

«Բայց դու ինչ աստղով աղջիկ ես, այս ինչ լավն ես դու և այլն»:

«Ամբողջ ընթացքում, որ ես այնտեղ եմ եղել, ՀՀԿ վստահված անձը հինգ բուրբակ կողքիցս այն կողմ չի գնացել: Ամբողջ ընթացքում ինձ սուրճ, հյութ, թեյ, ջուր էր բերում, պլիստ էր միացնում ոտքերիս տակ»:

Որոշ ընտրատեղամասերում դիտորդների հանդեպ բռնության սպառնալիքի դեպքեր են արձանագրվել:

«Ես ու Ասպարեզի դիտորդ տղան կանգնած էինք ցուցակների հետևում, որ տեսնենք՝ ճիշտ են լրացնում, թե ոչ: Նա ուզում էր տեսներ, թե քանի հոգի է քվեարկում: Հետո նրան այդ տեղից հեռացրեցին, տարան մի տեղ, որը ամեն ինչից հեռու էր մոտ 3 մետր: Հենց որ այդ տղան փորձեց նկարել, որ մեզ տարել են հեռու և չեն թողնում աշխատենք, հանձնաժողովի նախագահը եկավ ու սկսեց այդ տղայի դռերից բռնել, շորերը քաշքշել և սպառնալ»:

ՀՀ ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ընտրական հանձնաժողովների նիստերն, ինչպես նաև քվեարկության ընթացքը վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են լուսանկարահանել, տեսանկարահանել՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը: Սակայն որոշ դեպքերում, երբ դիտորդները նկարահանում էին ընտրախախտումները, դա լարվածություն և վեճեր էր առաջացնում:

«Հաշվարկի ժամանակ հանձնաժողովի անդամներից մեկը տեսախցիկի դեմից շատ կոպիտ ձևով փախցրեց քվեաթերթիկներն ու սկսեցին ասել՝ ի՞նչ իրավունք ունեք: Նրանք իմ՝ որպես դիտորդի իրավունքները խախտում էին: Ես ասացի՝ դիտորդը իրավունք ունի նկարելու, և ես այս պահին չեմ խանգարում ձեր աշխատանքը, և իրենց մոտ էլ զանգահարեցի և ճշտեցի, որ ես դրա իրավունքն ունեմ: Համոզվեցին, սակայն նորից չթողեցին: Ես էլ սկսեցի վիդեո անել»:

Եղել են նաև դեպքեր, երբ դիտորդի արձանագրած խախտման մասին բարձրաձայնելուն ի պատասխան հանձնաժողովները սպառնալիքներ են հնչեցրել, որ խնդրի մասին հայտնելու դեպքում նրանք էլ կհայտարարեն, որ դիտորդն անձնագրային տվյալներ պարունակող

ընտրողների ցուցակ է նկարահանել: Նման վարքագիծը խոչընդոտում էր դիտորդների բնականոն աշխատանքը և լարված մթնոլորտ ստեղծում:

Մեծ թվով ընտրատեղամասերում, երբ դիտորդը դիմում էր հանձնաժողովի նախագահին և քարտուղարին արձանագրած խախտումը գրանցամատյանում գրանցելու պահանջով, նրանք հրաժարվում էին գրառում կատարել:

Եղել են նաև դեպքեր, երբ հանձնաժողովը շատ պատրաստակամ աջակցում էր դիտորդների աշխատանքին, արձագանքում էր բոլոր դիտողություններին, շտկում էր սխալները: Ընտրատեղամասերից մեկում նախագահը խնդրել էր, որ մատյանները լրացնի նույն տեղամասում ներկա այլ կազմակերպության դիտորդը:

Հարկ է նշել նաև, որ հանձնաժողովների նախագահներն ու անդամները լավ տեղեկացված էին, թե որ կազմակերպություններն են դիտորդական առաքելություն իրականացնելու թիվ 1 ընտրատարածքում:

Քվեարկության օրը

Ստորև ներկայացնում ենք քվեարկության օրն արձանագրված խախտումների մանրամասները:

Քվեարկության բացում

ՔՀԻ դիտորդների գնահատմամբ, առաջին ընտրատարածքի տեղամասերի մեծ մասը դժվար հասանելի էին: Դիտորդներից բավականին շատ ժամանակ էր պահանջվել այդ ընտրատեղամասերը գտնելու համար: Արձանագրվել է մեկ դեպք, երբ ընտրատեղամասի վրա բացակայել է որևէ ցուցանակ, որը կվկայեր նշված շենքում ընտրատեղամասի առկայության մասին: ՔՀԻ դիտորդի զգուշացումից հետո միայն դռան վրա փակցվել է տեղամասի համարը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի համաձայն՝ դիտորդներն իրավունք ունեն ներկա լինելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում: Թեև ՔՀԻ դիտորդների մեծ մասը խնդիրներ չեն ունեցել ընտրատեղամաս մուտք գործելու հետ կապված, սակայն որոշ դեպքերում դիտորդները ստիպված են եղել տեղեկացնել հանձնաժողովին նիստերին ներկա գտնվելու իրենց իրավունքի մասին, որից հետո միայն նրանց թույլատրվել է ներս մտնել: Միաժամանակ արձանագրվել է մեկ դեպք, երբ ՔՀԻ դիտորդին թույլ չեն տվել մուտք գործել ընտրատեղամաս մինչև առավոտյան ժամը 08:00-ն՝ ներկա գտնվելու հանձնաժողովի նիստին և հետևելու դրա ընթացքին: Հանձնաժողովի քարտուղարը հիմնավորել է, որ դիտորդն իրավունք չունի ներկա գտնվելու հանձնաժողովի նիստերին, ինչի մասին է վկայում ԿԸՀ տրամադրած դիտորդի վկայականը, թեև վկայականի վրա նշված է ճիշտ հակառակը:

Որոշ ընտրատեղամասերում հանձնաժողովները չեն կարողացել պատշաճ ձևով տեղադրել գնոսման կնիքները, մոռացել են փակցնել նմուշները, ճիշտ չեն տեղադրել քվեարկության

խցիկները, ինչի հետևանքով չէր ապահովվում քվեարկության գաղտնիությունը և այլն: Օրինակ, որոշ ընտրատեղամասերում քվեախցիկներն այնպես էին տեղադրված, որ նրանց հետևում կամ ազատ տարածք էր (միջանցք), կամ ապակիով դուռ, կամ պատուհան, կամ թափանցիկ վարագույր, և, ցանկության դեպքում, հնարավոր էր հետևել քվեախցիկում գտնվողի գործողություններին: Որոշ ընտրատեղամասերում քվեատուփի կաշուն թղթերը պատռված են եղել, ինչը լցունման կասկած է առաջացրել:

Քվեարկության ընթացքը

Քվեարկության ընթացքում ՔՀԻ դիտորդներն արձանագրել են բազմաթիվ խախտումներ և վիճահարույց իրավիճակներ, այդ թվում՝ ուղղորդումներ, դիտորդների և լրագրողների նկատմամբ ճնշումներ, կուտակումներ, կրկնակի քվեարկության փորձեր, այլ անձանց փոխարեն քվեարկություն, ինչպես նաև՝ ընթացակարգային խախտումներ և այլն:

Քվեարկության օրն արձանագրվել են դեպքեր, երբ նույն անձինք մի քանի անգամ են այցելել ընտրատեղամաս՝ փորձելով քվեարկել մեկից ավելի անգամ: Դիտորդները ստիպված էին շատ աչալուրջ լինել, քանի որ շատ ընտրատեղամասերում չկային այլ կազմակերպությունների դիտորդներ, լրագրողներ կամ ՀՀԿ-ից բացի այլ կուսակցությունների վստահված անձինք:

«Ընտրատեղամասերից մեկում ՀԱԿ վստահված անձը մի տղայի ասաց, որ նա էլի է եկել ընտրության և պահանջեց անձնագիրը: Այդ տղան անձնագիրը չներկայացրեց և միանգամից հեռացավ»:

«Մի տարեց կին եկավ նույնականացման քարտով, դիտորդը մոտեցավ և խնդրեց նայել նրա անձնագիրն ու նկարել: Նկարն ուրիշին էր: Այդ պահին հանձնաժողովի բոլոր անդամները խառնվեցին իրար, մեծ աղմուկ բարձրացավ ու ասացին, որ հնարավոր է, շփոթել է»:

Հաճախ քվեարկության սենյակում գտնվել են առանց որևէ վկայականի անձինք, ովքեր դիտորդի հարցերին ի պատասխան ներկայացել են որպես ՀՀԿ վստահված անձինք: Դիտորդները ստիպված էին անընդհատ դիմել հանձնաժողովի նախագահներին՝ պահանջելով ապահովել օրենքով նախատեսված կարգը, մասնավորապես կա՛մ պահանջել, որ վստահված անձինք ունենան և կրեն համապատասխան վկայականներ, կա՛մ հեռանան քվեարկության սենյակից:

ՀՀ ընտրական օրենսգրքի 5–րդ հոդվածի համաձայն՝ քվեարկությունը գաղտնի է և քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է: Սակայն ՔՀԻ դիտորդներն սկանատես են եղել ուղղորդման, ընտրակաշառք տալու խոստումի կամ քվեարկության գաղտնիության խախտման դեպքերի:

«Մի տատիկ դիտորդին ասել էր՝ Յողիկը ո՞ր է, քվեարկել եմ, բա փողերս ու՞ր են»:

«Ես երեք դեպքի ականատես եմ եղել, երբ տարեց կամ հիվանդ մարդկանց բերում էին և անընդհատ ասում՝ հիշում ես, չէ՞, որը՝ ոնց: Իսկ երբ դուրս էին գալիս, ասում էին՝ սաղ ճիշտ արեցի՞ր, կարո՞ղ է շփոթել ես»:

«Երբ դրսում կանգնած էի, մի տատիկ դուրս եկավ և ասաց ՀՀԿ վստահված անձին՝ Արթոն՝ ր ջան, ամեն ինչ քո ասածով եմ արել: Նա շրջվեց ու ժպտաց ինձ, ասելով՝ ինքը մեր տատիկներից է»:

Շատ էին դեպքերը, երբ տարեց մարդկանց ուղեկցում էին որոշակի մարդիկ, դրսում սպասում էին, հիշեցնում էին. *«հիշում ես, չէ՞, ինչ պիտի անես»:* Քվեարկելուց հետո տարեց մարդկանց նստեցնում էին տաքսի և տուն ուղեկցում: Ավելի անապահով տեսքով քվեարկողներին, հիմնականում՝ միայնակ տարեցներին, ուղեկցողները հարցնում էին. *«ուտելու բան ունե՞ս, թե՛ ոչ»:*

ՔՀԻ դիտորդը արձանագրել էր, որ տեղամասի բացվելու պահից ի վեր ՀՀԿ վստահված անձը շատ ակտիվ էր: Վերջինս ընտրողներից հասցեներ էր հարցնում, անձնագրեր էր ստուգում, երբ մարդկանց հոսքը դադարում էր, հրահանգում էր, որպեսզի քվեարկողներ բերեն: Բացի այդ, գրեթե բոլոր ընտրատեղամասերում ՀՀԿ վստահված անձինք կազմակերպել էին ցուցակներով զանգեր. ցուցակը ձեռքերին զանգահարում էին քաղաքացիներին և կանչում քվեարկության՝ շատ դեպքերում բացահայտ, առանց թաքցնելու: Գրեթե բոլոր ընտրատեղամասերում դիտորդները նկատել են հաճախ ներսուղուրս անող քաղաքացիների, որոնք ուղեկցում էին հարևաններին դեպի ընտրատեղամաս: Ամենայն հավանականությամբ, այդ անձինք ունեին նախօրոք պայմանավորվածություն, թե բնակիչներից ով, երբ է գալու քվեարկության և ինչպես է քվեարկելու, իսկ հանրաքվեի օրը նրանք ապահովում էին այդ անձանց ներկայությունն ու քվեարկությունն՝ ըստ ցուցակների:

«Ես ուղղորդման դեպք նկատեցի՝ մի կին էր, որ հիմնականում մեծահասակներին տանում-բերում էր: Ես մոտեցա միջանցքում այդ կնոջը և հարցրեցի, թե ով է՝ ասաց, որ ինքը «ՀՀԿ շրջիկ վստահված անձն է»: Ես հարցրեցի իր վկայականի մասին, ասաց, որ չունի: Հետո մոտեցավ ՀՀԿ վստահված անձը և ասաց, որ այդ կինը տվյալ մանկապարտեզում է աշխատում և մարդկանց օգնում է, որ իրենք գան»:

«Մի կին քվեատուփի մոտ էր հասել և երբ ուզում էր գցեր քվեաթերթիկը, անդամներից մեկին ասեց՝ ձեր ասած քվեաթերթիկով եմ քվեարկել»:

Գրեթե բոլոր դիտորդների կողմից արձանագրվել է այն փաստը, որ քաղաքացիներին բերում էին ընտրատեղամաս «Z+» կամ «Միլենա» տաքսի ծառայության մեքենաներով: Նմանապես շահագործվում էին նաև N5 երթուղայինը և ավտոբուսները, թեև ընտրատեղամասերը դրանց երթուղուց դուրս էին: Որոշ ընտրատեղամասերում, երբ հանձնաժողովի անդամները հասկանում էին, որ դիտորդները նկատել են քաղաքացիների տեղափոխման գործընթացը տաքսիներով, հրահանգում էին մեքենաները կայանել ընտրատեղամասի մուտքից հետո՝ չերևացող տարածքում:

«Առաջին անգամ, երբ մեքենան տեսա, դուրս եկա, որ համարները նայեմ, հետո վստահված անձի միջամտությամբ մեքենաներն արդեն այդտեղ չէին կանգնում»:

Տաքսիների աշխատանքի հատուկ կազմակերպված լինելու մասին վկայում է նաև հանձնաժողովներից մեկի անդամի՝ ՔՀԻ դիտորդին ուղղված «խորհուրդը», երբ վերջինս ավարտել էր իր հերթափոխը. «Հանկարծ տաքսի «Z» չնստես, ուրիշ տեղ կտանի»:

Արձանագրվել են նաև քվեարկության գաղտնիության խախտման դեպքեր: Օրինակ, հանձնաժողովի անդամը, որը նստած էր տուփի մոտ, մի մարդու ծրարը վերցրեց, բացեց, նայեց, թե ինչ է նշած ու գցեց տուփի մեջ՝ ասելով՝ օգնում եմ»:

Դիտորդները նաև արձանագրել են, որ քվեարկության ծրարները թափանցիկ են և հնարավոր է առանց դրանք բացելու, լույսին պահելու միջոցով տեսնել՝ ինչպե՞ս է քվեարկված ներսում տեղադրված քվեաթերթիկի վրա:

Նախապատրաստական աշխատանքների և ուղղորդման մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ քվեաթերթիկների հաշվարկի ընթացքում դիտորդները նկատել էին, որ քվեատուփերի մեջ վերևի մասում հիմնականում «Ոչ»-ի քվեներն էին, իսկ ներքևում «Այո»-ինը, ինչը վկայում է այն մասին, որ առավոտյան ժամերին և ցերեկվա ընթացքում եկել են կամ բերվել ու ուղղորդվել են այն քաղաքացիները, որոնց հետ նախապես «Այո» քվեարկելու պայմանավորվածություն էր ձեռք բերված:

«Վստահված անձը հաշվարկի ժամանակ ասաց՝ ոչինչ ախպեր՝ տակիները արդեն «Այո» են»:

Շատ հանձնաժողովների անդամներ և ՀՀԿ վստահված անձինք տեղյակ էին այդ առանձնահատկության մասին. գիտեին, թե քվեատուփերի որ մասում որ շենքերի բնակիչների քվեաթերթիկներն են: Որոշ տեղամասերում նույնիսկ հանձնաժողովի նախագահին խնդրում էին, որ չխառնի քվեաթերթիկները հանելուց, որպեսզի տեսնեն, թե ով ինչպես է քվեարկել:

Տարբեր խնդիրներ կային նաև ընտրողների ցուցակների հետ կապված:

«Երկու աղջիկ հիմնական ցուցակներում իրենց անունները չգտան, լրացուցիչ ցուցակներում չգտան: Հանձնաժողովի նախագահը սեյֆից հանեց դատարկ լրացուցիչ թերթիկներից և ասեց՝ ձեր անուն-ազգանունը այստեղ գրեք, գնացեք քվեաթերթիկ վերցրեք ու քվեարկեք: Դիտորդն ասաց, որ նման բան չի կարելի անել, դա խախտում է, և այդ մարդկանց բերած տեղեկանքով պետք է գրանցեին: Ինձ պատասխանեց, որ այդ աղջիկները գնացել են և անձնագրային բաժինն իրենց տեղեկանք չի տվել: Բոլորը խառնվեցին, քանի որ դա ակնհայտ խախտում էր: Հետո այդ երկու աղջիկները անունները հիմնական ընտրացուցակում գտան և ասացին՝ «գանգենք գան ստորագրեն, բայց էլ թերթիկ չենք տա, իսկ դա էլ պատռենք ու գցենք»: *Զանգեցին, այդ աղջիկները եկան, ստորագրեցին: Այդ թուղթն էլ պատռեցին ու գցեցին, որ խնդիրներ չունենան»:*

Ցուցակների հետ կապված այլ անճշտություններ ևս կային: Եղել են դեպքեր, որ ցուցակներում եղել են անուններ, որոնք հաշվառված չեն տվյալ հասցեում: Նույնանման

ահագանգեր են ստացվել նաև ՔՀԻ թեժ գծին: Եղել են դեպքեր, երբ նախորդ ընտրություններին մարդիկ քվեարկել էին այդ տեղամասում, իսկ հանրաքվեի ժամանակ իրենց անունները չկային, նույն շենքի բնակիչների ոմանց անունները կային ընտրացուցակներում, մյուսներինը՝ ոչ:

Մի քանի ընտրատեղամասում արձանագրվել էր, որ ընտրողները եկել են քվեարկելու, սակայն նրանց անվան դիմաց արդեն լրացրած տվյալներ և այլ անձի ստորագրություն է եղել: Այդպիսի դեպքերը միշտ չէ, որ արձանագրվում էին հանձնաժողովի կողմից, իսկ հանձնաժողովի անդամները հայտարարում էին, որ դա տեխնիկական վրիպակի արդյունք է: Մի քանի տեղամասում նման դեպք նույնիսկ մի քանի անգամ է արձանագրվել, ինչը կասկածների տեղիք է տալիս: Այս համատեքստում հատկանշական է որոշ հանձնաժողովների նախագահների արձագանքը: Նրանցից մեկը, քվեարկության եկած քաղաքացուց լսելով նման իրավիճակի մասին, պատասխանել է, որ երևի քվեարկողի «քույրն է նույնականացման քարտով քվեարկել»: Արդյունքում ընտրողը լքել է ընտրատեղամասն՝ առանց քվեարկելու: Մեկ այլ դեպքում հանձնաժողովի նախագահն, ի պատասխան քվեարկողի բողոքի, ենթադրել է, որ նրա փոխարեն եղբայրն է քվեարկել, կամ տատիկը, կամ ընտանիքի անդամներից մեկը: Մտահոգիչ է, որ հանձնաժողովների նախագահներն իրենց իրավունք են վերապահում նման ձևով պատասխանել ակնհայտ խախտում պարունակող դեպքերում, դա համարում են օրինական, իսկ քաղաքացիները չեն իրացնում քվեարկելու իրենց իրավունքը:

«Մի կին եկավ ու ասաց, որ իր տղան քաղաքում չէ, իսկ իր տեղը քվեարկել են: Հանձնաժողովի նախագահը դուրս եկավ, խոսեց հեռախոսով, վերադարձավ և ասաց՝ Սեթոն ասում է, որ քո տղան եկել է քվեարկության: Այդ կինը սարսափած դեմքով փախավ ընտրատեղամասից»:

«Երբ քաղաքացին (մոտ 50 տարեկան) տեսավ, որ իր անվան տեղը ստորագրված է, մեծ աղմուկ բարձրացրեց: Մի 20 բուպե անց նորից հետ եկավ ու քվեարկեց: Պատճառաբանությունն այն էր, որ հասցեի հետ կապված շփոթմունք է եղել»:

«Մոտ 60 տարեկան պապիկ եկավ ու պարզվեց, որ իր անվան դիմաց արդեն ստորագրված է: Հետո պարզվեց, որ նույն անուն-ազգանունով, բայց տարբեր հայրանունով մարդիկ են եղել: Մյուսի անվան տակ գրանցեցին, սլաքներով նշեցին»:

Քվեախցիկում ընտանիքի անդամների միասին քվեարկելու դեպքեր նույնպես շատ են արձանագրվել, և նրանցից ոչ մեկ չի գրանցվել որպես օգնող անձ:

«Հարևաններն իրար հետ էին եկել, ու երբ մեկը քվեախցիկում էր, մյուսը մոտեցավ նրան»:

«Դե ամուսինս է, իրար հետ քվեարկենք ու դուրս գանք»:

«Մի դեպքում էլ հայր ու որդի էին՝ ասում էր՝ քվեարկի ու դուրս գանք: Ես էլ ասում էի, որ նմուշը կա և չի կարելի ներսում գտնվել: Ասածներս ոչ մի բանի տեղ չէին դնում, ու դա ոչ էլ խախտում էին գրանցում»:

Եղել են նաև ընթացակարգային խախտումներ: Օրինակ՝ շատ ընտրատեղամասերում վստահված անձինք, հիմնականում ՀՀԿ ներկայացուցիչները, իսկ մի դեպքում անգամ հանձնաժողովի անդամները բեյջ չեն ունեցել, և բեյջերը հայտնվել են բավական ուշ՝ դիտորդների համառ պնդումներից հետո:

«ՀՀԿ վստահված անձր բեյջ չունեն: Ասում էր՝ ծեր մարդ եմ, չեմ հիշում, երևի ընկել է: Ես ասում էի, որ գնա ու գտնի, սակայն ժամերն անցնում էին, բայց բեյջը չէր հայտնվում: Երբ նորից էի հարցնում, թե ուր է, ասում էր՝ դե զգվացրի՛ր, ինձանից ի՞նչ ես ուզում: Նա մինչև վերջ էլ չգտեց: Ես նախագահին էլ ասեցի, ասեց՝ դե մեծ մարդ է, ի՞նչ ես ուզում»:

«Միայն 15:25 բեյջերը բերեցին, լրացրեցին, բաժանեցին բոլորին»:

Որոշ ընտրատեղամասերում ՀՀԿ կողմից ներկա են եղել միաժամանակ 2-3 վստահված անձ, հիմնականում՝ առանց վկայականի: Այլ խորհրդարանական խմբակցություններ ներկայացնող վստահված անձինք էլ աչքի չեն ընկել խախտումներ արձանագրելու պատրաստակամությամբ: Դա են վկայում քննարկման ժամանակ տարբեր ընտրատեղամասերի դիտորդների հետևյալ մեջբերումները.

«Կար ՀԱԿ-ի վստահված անձը, որը եղած-չեղած մի հաշիվ էր»:

«Երբ ես խախտումներ էի արձանագրում, «Ժառանգության» վստահված անձը ինձ առարկում էր»:

«Վստահված անձը ՀՀԿ-ից էր, երկուսն էին և առավոտվանից այնտեղ էին: Հետո ՀԱԿ-ից եկավ վստահված անձ երկու ժամով ու գնաց»:

Ամենախնդրահարույց հարցերից մեկը եղել է այն, որ հանձնաժողովի անդամները խուսափում էին խախտումները գրանցամատյանում գրանցել: Եթե այս խնդրին գումարում ենք դիտորդի՝ քվեարկության վերահաշվարկի համար բողոք ներկայացնելու իրավունքի բացակայությունը, ստացվում է, որ դիտորդը շատ անգամ անգոր է լինում պատշաճ ձևով արձանագրելու խախտումը, և նրա հայտարարություններն ու խախտումների վերաբերյալ հաղորդումներն անհետևանք են մնում, քանի որ լուրջ չեն ընդունվում իրավապահ մարմինների կողմից: Այս իրավիճակը մեկ անգամ ևս հաստատվեց սահմանադրական հանրաքվեից հետո, երբ արձանագրված խախտումների վերաբերյալ Քննչական կոմիտեի և Ոստիկանության կողմից նախապատրաստվող նյութերի քննության ժամանակ քննիչները և հետաքննիչներն ակնկալում էին խախտման ապացույց ստանալ դիտորդից, ինչպես նաև վիճարկում էին նրա բացատրությունը՝ հղում անելով այն փաստին, որ գրանցամատյանում խախտման վերաբերյալ գրառում չկա: Իրավապահ մարմիններն ակնհայտորեն որպես հիմք վերցնում էին հանձնաժողովի անդամների բացատրությունները, ովքեր շահագրգիռ անձինք են, իսկ դիտորդի վկայությունները ոչ արժանահավատ համարում, պնդում, որ սխալ է գնահատել իրավիճակը և մերժում էին քրեական գործի հարուցումը:

Որոշ ընտրատեղամասերում արձանագրվել են նաև կուտակումներ, ընդ որում՝ հանձնաժողովի նախագահները քայլեր չէին ձեռնարկում դրանք վերացնելու ուղղությամբ:

Արձանագրվել են դեպքեր, երբ քաղաքացիներն, ի նշան բողոքի, ջնջել են իրենց անունը ցուցակից:

«Մի աղջիկ իր անունը գտավ ցուցակում ու գրիչով գիծ քաշեց, բողոքելով, թե ինչու է իր անունը ցուցակներում: Հանձնաժողովի նախագահը ոստիկաններին կանչեց, արձանագրեցին»:

Ընտրատեղամասերից մեկը գործում էր «Ավան» հոգեբուժական կլինիկային կից, որի գործունակ հիվանդները նույնպես հնարավորություն են ունեցել քվեարկել շրջիկ արկղի միջոցով: ՔՀԻ դիտորդները դիտարկել են նաև այդ գործընթացը և արձանագրել, որ հիվանդներից ոմանք, ովքեր հրաժարվում էին քվեարկելուց, ստիպված էին գրավոր դիմում ներկայացնել:

Ընտրատեղամասերից մեկի դռներին փակցված ցուցակները պատռված էին: Դիտորդը առաջարկեց, որ ցուցակների մոտ մեկը կանգնի, որպեսզի քաղաքացիներին տեղեկացնի, որ իրենց անունները ցուցակներում չգտնելու դեպքում ներս անցնեն և գտնեն իրենց անունները: Բայց ոչ ոք չկանգնեց, և մարդիկ հետ էին գնում:

Քվեաթերթիկների հաշվարկը

Քվեների հաշվարկի ժամանակ նույնպես դիտորդները խախտումներ են արձանագրել: Օրինակ, երբ քվեաթերթիկների հաշվարկման փուլում սենյակում գտնվել են անձինք, ովքեր այնտեղ գտնվելու օրինական հիմք չունեին, իսկ հանձնաժողովի նախագահը հապաղում էր և այդ անձանց հեռացնելու ուղղությամբ գործողություններ չէր ձեռնարկում: Օրինակ, դպրոցում գտնվող ընտրատեղամասերից մեկում ժամը 20:00-ից հետո առանց որևէ վկայականի քաղաքացի էր շրջում: Երբ դիտորդը հետաքրքրվեց, թե ո՞վ է նա և արդյո՞ք իրավունք ունի հաշվարկի ժամանակ գտնվել քվեարկության սենյակում, նրան հանձնաժողովի անդամները պատասխանեցին, որ այդ անձը դպրոցի տնօրենն է, շրջում է տարածքով և օգնում է: Երբ դիտորդը մոտեցել է նրան և հարցրել, թե արդյո՞ք նա ունի քվեարկության սենյակում գտնվելու հիմք, հակառակ դեպքում առաջարկելով լքել տարածքը, քաղաքացին հրաժարվել է հեռանալ՝ ասելով. *«Որտեղ կուզեմ, կլինեմ, բեյջ չեմ կախելու, ինչ կուզեմ, կանեմ, շատ անեք, դպրոցի լույսերն էլ կանջատեմ, սաղ ձևերն էլ գիտենք...»:* Միայն դիտորդի համառ պնդումներից հետո այդ անձը հեռացվել է: Հատկանշական է, որ հանձնաժողովի անդամներից մի քանիսը նույն դպրոցի աշխատակիցներն էին և կաշկանդված էին տնօրենի ներկայությամբ:

Հաշվարկի ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ հանձնաժողովի անդամները «Ոչ»-ի քվեաթերթիկները դնում էին «Այո»-ի քվեաթերթիկների տակ: Որոշ դեպքերում արագ էին հանում ու հաշվառում քվեաթերթիկները, որ շփոթություն առաջացնեն: Դիտորդները հորդորում էին հանձնաժողովի անդամներին քվեների հաշվարկն իրականացնել ընթացակարգին համաձայն՝ բոլոր ներկաներին ցույց տալով քվեաթերթիկները: Որոշ

ընտրատեղամասերում դիտորդներին չէին թողնում մոտ նստել՝ պատճառաբանելով, որ նրանք այդ պարագայում կխանգարեն:

«Ես երեք անգամ տեսա, որ «Ոչ»-ի թերթիկը դրեցին «Այո»-ի տակ»:

«Կային դեպքեր, որ թերթիկներն արագ էին դնում: Ես ասում էի՝ դանդաղ դրեք, քանի որ ուզում եմ նայել»:

«Հաշվարկի ժամանակ մեզ չէին թողնում մոտ նստել՝ ո՛չ Ժառանգության վստահված անձին, ո՛չ մեկին: Ասում էին՝ խանգարում եք, թողեք հաշվենք, հետո վերջում կգաք ու հատ-հատ կհաշվեք: Այդպես էլ եղավ, վերջում հաշվեցինք»:

Արձանագրվել են նաև լցոնումների դեպքեր, որոնք դիտորդներն անմիջականորեն չեն տեսել, սակայն ձայների հարաբերակցության կտրուկ փոփոխությունը հաշվարկի ժամանակ վկայում էր նման խախտումների բարձր հավանականության մասին:

«Քվեների հաշվարկի ժամանակ ինչ-որ ձայներ էին գալիս դրսից, ես դուրս եկա, երբ վերադարձա, հասկացա, որ ինչ-որ փոփոխություն կա: Հետո ես նորից 5 րոպեով դուրս եկա ու տեսնում եմ, որ «Այո»-ն շատացել է»:

Հաշվարկի ընթացքում շատ ընտրատեղամասերում ընդհատումներ են եղել: Հիմնականում դա պատճառաբանվում էր հանձնաժողովի՝ սուրճ խմելու կամ ընթերցելու անհրաժեշտությամբ: Բացի այդ, փորձեր էին արվում ձգձգել հաշվարկի ընթացքը՝ հույս ունենալով, որ դիտորդները կհոգնեն և կհեռանան:

«10 րոպե հաշվարկ էին անում, կես ժամ՝ ընդմիջում»

Որոշ դեպքերում, երբ դիտորդները բարձրաձայնում էին արձանագրած խնդրի մասին, նրանց հասցեին սպառնալիքներ կամ սպառնալիք պարունակող ակնարկներ էին հնչեցվում:

Արձանագրվել են դեպքեր, երբ քվեաթերթիկներն անվավեր են ճանաչվել, սակայն դրանք ակնհայտ անվավեր չեն եղել: Իրավիճակն արձանագրելու համար ՔՀԻ դիտորդը ցանկացել է լուսանկարել վիճելի թվացող քվեաթերթիկները, սակայն հանձնաժողովը թույլ չի տվել:

Այն դեպքերում, երբ քվեաթերթիկի վավեր կամ անվավեր լինելը վիճելի էր, հանձնաժողովի անդամները շատ անգամ կողմնակալ վերաբերմունք էին ցուցաբերում՝ փորձելով վավեր «Ոչ» քվեները համարել անվավեր, իսկ անվավեր «Այո» քվեները՝ վավեր: Դիտորդների ներկայության և համառության շնորհիվ նմանատիպ դեպքերում միանման մոտեցում էր կիրառվում ինչպես «Այո», այնպես էլ՝ «Ոչ» քվեների համար:

«Իմ ընտրատեղամասում «Ոչ»-երը շատ էին, հետո դուրս հանեցին երկու ծրար, երկուսն էլ «Ոչ», և նախագահին ասաց, որ ինքը կարծում է, որ դրանք անվավեր են: ՀԱԿ ներկայացուցիչն ասաց՝ դնենք քվեարկության: Քվեարկության ժամանակ ակտիվ ՀՀԿ ներկայացուցիչն ասեց, որ ինքը դեմ է միանշանակ, նա և նախագահը ձեռք բարձրացրեցին ու մյուս կանայք հերթով՝ ես էլ, ես էլ: Բնականաբար, այդ երկուսն էլ ճանաչվեցին անվավեր: Բայց հետո ինչքան

նմանատիպ «Այո»-ներ դուրս եկան, դրանք դարձյալ դնում էին անվավերների մեջ, դա համարեցին նախադեպ: Նրանք չէին էլ սպասում, որ այդքան «Այո» դուրս կգա»:

«Մեզ մոտ հակառակ «Վ» գրածները համարել են վավեր, այն դեպքում, երբ ես ասում էի, որ դրանք անվավեր են, սակայն նրանք չընդունեցին: Հետո «Ոչ»-երը ավելի շատ հակառակ քվեարկած դուրս եկան և իրենք ստիպված համարում էին վավեր»:

Այն ընտրատեղամասերում, որտեղ «Ոչ»-ը ավելի շատ ձայներ է հավաքել, քան «Այո»-ն, դիտորդները բախվել են հանձնաժողովի անդամների անկեղծ զարմանքին և հիասթափությանը: *«Ամբողջ տարին շատերին լավություն ենք արել, բայց «Ոչ» են քվեարկել»:* Այդ «լավությունը» ենթադրում էր տարբեր սոցիալական ծառայությունների մատուցում՝ անվճար բուժօգնության տրամադրում, առանց հերթի երեխաներին մանկապարտեզ ընդունում և այլն:

Հատկանշական է նաև, որ հաշվարկի ժամանակ, երբ «Ոչ» քվե էր դուրս գալիս, հանձնաժողովի անդամները ցածր ձայնով էին հայտարարում, իսկ երբ «Այո»՝ գոչում էին:

Հաշվարկի ժամանակ, երբ վերջին քվեն բացվեց և պարզ դարձավ, որ «Այո» քվեարկածների թիվը գերազանցում է «Ոչ»-ի օգտին քվեարկածների թվին, հաշվարկին ներկա ՀՀԿ վստահված անձը բարձր բացականչեց. *«Կերա՞ք: Արդարություն էիք ուզում, բայց «Այո»-ն հաղթեց»:*

Հատկանշական է, որ ընտրատարածքի տարբեր տեղամասերի հաշվարկի արդյունքները զգալիորեն տարբերվում էին միմյանցից, իսկ որոշ դեպքերում նույն շենքում գտնվող երկու ընտրատեղամասի արդյունքները լրիվ հակառակն էին. մեկում ձայների երկու երրորդը եղել է «Այո»-ի օգտին, իսկ հարևան ընտրատեղամասում՝ նույնքան ձայն տրվել է «Ոչ»-ին:

Ընտրատարածքի 9 ընտրատեղամասում, որտեղ ՔՀԻ իրականացրել է դիտորդություն, հաղթել է «Այո»-ն՝ ստանալով քվեների 67%-ը, իսկ 11 տեղամասում հաղթել է «Ոչ»-ը՝ քվեների 63%-ի առավելությամբ:

Խախտումների վերաբերյալ քննության իրականացում

Ընդհանուր տեղեկություններ

Ժողովրդավարական հասարակությունում արդար ընտրություններ անցկացնելը շատ կարևոր է, հակառակ դեպքում հարցականի տակ է դրվում ընտրված պաշտոնյանների լեգիտիմությունը և նրանց ամբողջ գործունեությունը: Հետևաբար, ելնելով հանրային շահից, պետությունը պետք է շահագրգռված լինի խստորեն պատժել նրանց, ովքեր կատարում են ընտրական խախտումներ: Բացի այդ, ընտրական խախտումները, հաշվի առնելով դրանց հանրային վտանգավորության աստիճանը, պետք է դասվեն ծանր հանցագործությունների թվին:

Գործող ՀՀ քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածների համաձայն՝ քրեորեն պատժելի են հետևյալ ընտրական խախտումները. ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը, ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը, ընտրությունների անցկացման ընթացքում թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ զրպարտչական տեղեկություններ տարածելը, ընտրողների ցուցակները կազմելու, դրանք քաղաքացիներին և կուսակցություններին տրամադրելու կամ հրապարակելու կարգը խախտելը, մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը, քվեարկության գաղտնիությունը խախտելը, կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը կամ ակնհայտ կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ հանձնելը կամ իրացնելը, ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի կնիքը չվերադարձնելը, կնիքի պահպանման սահմանված կարգը խախտելը, զենքով՝ տեղամասային կենտրոն մուտք գործելը, վստահված անձին, ընտրական հանձնաժողովի անդամին, դիտորդին կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչին ընտրական փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովի արձանագրությունների պատճեններ չտալը և ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

Պաշտոնական տվյալների համաձայն՝ 2009-2014 թվականներին ՀՀ առաջին աստիճանի դատարաններում քննվել է 18 գործ, հիմնականում 153-րդ (Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը), 149-րդ (Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը) և 154.2-րդ (Ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը) հոդվածներով: Արդյունքում մեղավոր է ճանաչվել և դատապարտվել 22 անձ, իսկ մեկ անձ արդարացվել է: Հատկանշական է, որ դատապարտված անձանցից հիմնականում դատապարտվել են տուգանքի, իսկ ազատազրկման դատապարտվածների նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել: Նման մոտեցումն ամրապնդում է ընտրական իրավախախտումների համար անպատժելիության մթնոլորտը:

Հանրաքվեի ընթացքում արձանագրած խախտումների վերաբերյալ քննություն

Այս հանրաքվեն աչքի ընկավ նաև իրավապահ մարմինների ակտիվությամբ: Գլխավոր դատախազության հաղորդմամբ՝ նյութեր են նախապատրաստվել հանրապետության ողջ տարածքում արձանագրված և քվեարկության օրը ՋԼՄ-ների հրապարակած հարյուրավոր հրապարակումների վերաբերյալ: Քննչական կոմիտեի քննիչները նյութերի նախապատրաստման աշխատանքները սկսել են միանգամից քվեարկության օրը, սակայն ցուցաբերած ջանասիրության արդյունքում խանգարել են դիտորդների աշխատանքին, քանի որ դիտորդները ստիպված էին դուրս գալ քվեարկության սենյակից բացատրություն տալու համար: Ի սկզբանե մտահոգիչ էր քննիչների դիրքորոշումը. նրանք հաղորդման/խախտման փաստը ստուգելու փոխարեն ստուգում կամ վիճարկում էին դիտորդների՝ իրավիճակին

արձանագրելու և գնահատական տալու կարողությունը: Արդյունքում ՔՀԻ-ն որոշում ընդունեց հրահանգել իր անունից հանդես եկող դիտորդներին քվեարկության օրը բացատրություն չտալ և չլքել դիտորդական առաքելության իրականացման վայրը:

Ինչպես արդեն նշվել է, քվեարկության օրը ՔՀԻ հրապարակած (անգամ ոչ մեծ նշանակություն ունեցող) միջադեպերով իրավապահ մարմինները 30-ից ավելի նյութեր են նախապատրաստել: Մակայն դա ավելի շատ բուռն, արդյունավետ գործունեության տպավորություն ստեղծելու միտում ուներ: Փաստացի իրավապահ մարմինների գործելաոճը, ինչի արդյունքում նախապատրաստված հարյուրավոր նյութերի հիման վրա քրեական գործ չի հարուցվել, և քննության մակերեսային լինելը թույլ են տալիս եզրակացնել, որ այդ աշխատանքը ձևական բնույթ էր կրում: Իրավապահ մարմինները գործել են արագ, դեկավարների կողմից նշանակված վերջնաժամկետների ճնշման ներքո և շատ դեպքերում աշխատանքը կատարել են ձևական, իսկ արդյունքների մասին չեն տեղեկացրել ո՛չ դիտորդին, ո՛չ էլ ՔՀԻ-ին: ՔՀԻ-ն դիմել է Գլխավոր դատախազին՝ որոշումների պատճենները տրամադրելու պահանջով:

Մեկ նկատառում ևս. իրավապահ մարմինների նման բուռն և անգամ ճնշող դիրքորոշումը տպավորություն է ստեղծում, որ այն այլ նպատակ է հետապնդում. մասնավորապես քննիչների հետ շփման նման փորձից հետո դիտորդները հետագա ընտրությունների ժամանակ, հնարավոր է, ընդհանրապես խուսափեն իրավապահ մարմինների հետ շփումներից, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ արձանագրված խախտումների վերաբերյալ հաղորդում տալու նրանց իրավունքի իրականացմանը:

Ինչ վերաբերում է ՔՀԻ դիտորդների արձանագրած և հրապարակած դեպքերին, ապա ՀՀ ոստիկանության և Քննչական կոմիտեի կողմից ուսումնասիրվող դեպքերի վերաբերյալ բացատրություն են տվել ՔՀԻ դիտորդների որոշ մասը, տրամադրվել են ՔՀԻ տրամադրության տակ գտնվող տեսաձայնագրությունները և լուսանկարները: Դրանցից մի մասի վերաբերյալ ՔՀԻ-ին ծանուցել են, որ քրեական գործի հարուցումը մերժվել է, իսկ մնացածի վերաբերյալ ընդհանրապես որևէ տեղեկություն չի տրամադրվել ո՛չ ՔՀԻ-ն, ո՛չ էլ դիտորդներին: ՔՀԻ-ն կայացրած որոշումներից մի քանիսի դեմ բողոք է ներկայացրել Երևան քաղաքի դատախազին՝ պահանջելով քրեական գործ հարուցել: 2016թ. հունվարի 14-ին Երևան քաղաքի դատախազությունից պատասխան է ստացվել դեպքերից մեկով քննիչի որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին, իսկ մեկ այլ դեպքով՝ քննիչի որոշումը թողնվել է անփոփոխ:

Եզրակացություն

ՔՀԻ կողմից դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակն էր նպաստել ընտրական հանձնաժողովների աշխատանքի օրինականության մակարդակի բարձրացմանը, կանխել ընտրախախտումները և կեղծիքները, ապահովել ընտրախախտումների գրանցումը, բարձրացնել քաղաքացիների իրազեկվածությունն ընտրական իրավունքի իրացման վերաբերյալ, ինչպես նաև նպաստել իրավապահ մարմինների կողմից դիտորդների արձանագրած խախտումների վերաբերյալ քննության իրականացմանը:

2015թ. դեկտեմբերի 6-ի Սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ հանրաքվեն անցավ նախորդ հանրաքվեներին բնորոշ ընտրախախտումների մեծ թվով: ՀՀ ազգային ժողովում ընդգրկված խմբակցությունները ներկայացնող հանձնաժողովների անդամները, բացառությամբ ՀԱԿ ներկայացնող որոշ անդամների, հանդես են եկել որպես միասնական թիմ, շահագրգռված են եղել հանրաքվեին դրված հարցի վերաբերյալ ամեն գնով դրական արդյունք ապահովելու հարցում և չեն արձանագրել և արձագանքել կատարված խախտումներին: Հանրաքվե նախաձեռնող խմբի համար ցանկալի արդյունք ապահովելու գործին լծվել էին և՛ տարբեր կուսակցություններ ներկայացնող հանձնաժողովների նախագահները/անդամները, և՛ ընտրատեղամասերի վարչական տարածքում որոշակի տիպի հեղինակություն վայելող անձինք՝ իրենց համակիրներով, հիմնականում՝ արական սեռի երիտասարդներով: Վերջիններս, քվեարկության օրը ներառյալ, տարբեր մեթոդներով, այդ թվում՝ անօրինական, ազդել են հանրաքվեի բնականոն ընթացքի և արդյունքների վրա:

Թեև կային ընտրատեղամասեր, որտեղ ակնհայտ խախտումներ չեն արձանագրվել, ընդհանուր առմամբ, քվեարկության օրն անցել է լարված ու դիտորդների նկատմամբ տարատեսակ ճնշումների մթնոլորտում: Քվեարկության օրը ՔՀԻ դիտորդների կողմից արձանագրվել են խախտումների և ընտրական գործընթացի վրա սովորական գցող բազմաթիվ դեպքեր, այդ թվում՝ մասսայական ուղղորդումներ, բազմակի քվեարկության դեպքեր և փորձեր, այլ անձանց փոխարեն քվեարկելու դեպքեր, հաշվարկի արդյունքների կեղծման դեպքեր, դիտորդների նկատմամբ սպառնալիքներ և այլն:

Թեև ընտրական գործընթացն, ընդհանուր առմամբ, անցավ առանց ֆիզիկական բռնության բացահայտ դրսևորումների, ինչիպիսի դեպքեր արձանագրվել են նախկինում, սակայն պարզ դարձավ, որ ընտրակեղծիքների որևէ մեթոդ մոռացված չէ և կիրառելի է:

Քվեարկության օրը թիվ 1 ընտրատարածքում ՔՀԻ դիտորդների կողմից արձանագրված բոլոր խախտումները և կասկածելի իրավիճակներն անմիջապես հրապարակվել են կազմակերպության Մարդու իրավունքները Հայաստանում (www.hra.am) կայքում, տարածվել սոցցանցերում, որոնց արձագանքել են շահագրգիռ կառույցները, այդ թվում՝ հրապարակումների «հերոս» հանձնաժողովների անդամները և վստահված անձինք, ինչն ուղղված էր հետագա խախտումների կանխարգելմանը:

ՔՀԻ դիտորդների կողմից արձանագրած միջադեպերից 32-ով ՀՀ ոստիկանությունը և Քննչական կոմիտեն ex officio նյութեր են նախապատրաստել: Տվյալ ընտրատարածքում

դիտորդների աշխատանքի շնորհիվ գրանցված խախտումների և դրանցով նախապատրաստած գործերի ցուցանիշն ամենաբարձրն է հանրապետությունում: Այնուամենայնիվ, խախտումների մասին հաղորդումները մակերեսորեն են քննվել, իսկ իրավապահ մարմինների ձեռնարկած գործողությունները ձևական բնույթ են կրել և միտված են եղել հասարակության անդամների և միջազգային կազմակերպությունների առջև տպավորություն ստեղծելուն, որ ընտրախախտումների դեմ պայքար է մղվում: Նման պրակտիկան ամրապնդում է ստեղծված և արմատացած անպատժելիության մթնոլորտը և ավելացնում է հասարակության անվստահությունը իշխանության մարմինների և արդարադատության համակարգի նկատմամբ:

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ Հայաստանում հերթական անգամ տապալվեց ժողովրդավարական հասարակությանը վայել ընտրական գործընթաց կազմակերպելու հնարավորությունը և խախտվեցին ինչպես ներպետական օրենսդրական նորմերն, այդպես էլ՝ միջազգային չափանիշները:

Թեև խորապես համոզված ենք, որ ընտրությունների արդար և վստահելի ընթացքը կախված է մեծամասամբ իշխանությունների քաղաքական կամքից, այնուամենայնիվ, ներկայացնում ենք առաջարկություններ, որոնք կարող են նպաստել ընտրական գործընթացների որակի բարելավմանը:

Առաջարկություններ

Ընդհանուր բնույթի

- Ապահովել քվեարկության ամբողջ ընթացքի նկարահանումը և առցանց հեռարձակումը, հատկապես՝ հաշվարկի գործընթացի՝ ապահովելով քվեաթերթիկների վրա արված նշումների տեսանելիությունը:
- Հրապարակել քվեարկությանը մասնակցած անձանց ցուցակներն (առանց անձնագրային տվյալների):
- Ներդնել էլեկտրոնային քվեարկության համակարգ՝ կենսաչափական տվյալների օգտագործմամբ:
- Երկարացնել վերահաշվարկ պահանջելու դիմումների ներկայացման ժամկետը՝ սահմանելով այն քվեարկության հաջորդ օրվա ժամը 12:00-ից սկսած՝ 72 ժամվա ընթացքում:
- Բարձրացնել ծրարների որակն՝ ապահովելով դրանց ոչ թափանցիկ լինելը:
- Ապահովել, որ ՀՀ տարածքում գործող բոլոր ընտրատեղամասերը համապատասխանեն օրենքով նախատեսված պայմաններին, մասնավորապես ապահովեն քվեարկության գաղտնիությունը և հասանելիությունը:

- Ապահովել, որ քվեարկության սենյակների սահմանները հստակ ճանաչելի լինեն՝ տարանջատված պատերով և ունենան մեկ մուտք:
- Պատրաստել և հեռուստատեսությամբ տարածել ընտրական խախտում կատարելու իրավական հետևանքների և քրեական պատասխանատվության մասին սոցիալական հոլովակներ:
- ՁԼՄ-ների միջոցով բարձրացնել բնակչության իրազեկվածությունը ընտրողների ցուցակների անճշտությունները վերացնելու վերաբերյալ դիմումներ տալու, դիմումները քննարկելու և ընտրողների ցուցակները ճշտելու կարգի վերաբերյալ:
- Մահմանել քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնող անձի տվյալները գրանցելու մանրամասն կարգ, այդ թվում՝ ձևաթղթում ներառելով օգնություն ցուցաբերելու հիմքն, օգնողի և քվեարկող քաղաքացու տվյալներն, օգնություն ցուցաբերելու ժամը և այլն:
- Գործնականում ապահովել, որ քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին օգնելու բոլոր դեպքերը գրանցվեն, իսկ չգրանցելու բոլոր դեպքերը դիտարկվեն որպես քվեարկության գաղտնիության խախտում՝ մեղավորներին ենթարկելով պատասխանատվության:
- Խստացնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 149-154.6-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համար նախատեսված սանկցիաները:
- Բացառել քարոզչական և կուսակցությունների շտաբերի կողմից քվեարկության օրը և դրա նախորդող օրերին ընտրողներին որևէ սոցիալական աջակցություն բաժանելը, և դա դիտարկել որպես ընտրակաշառք:
- Գործուն քայլեր ձեռնարկել՝ բացառելու ընտրողների անվճար տաքսիների և այլ հասարակական տրանսպորտի միջոցներով հատուկ փոխադրումն ընտրատեղամասեր՝ դա դիտարկելով որպես ընտրակաշառք:
- Հանձնաժողովի անդամ դառնալու թեկնածուների համար կազմակերպվող որակավորման ստուգարքի օրվա և ժամի վերաբերյալ նախապես մամլո հաղորդագրություն տարածել՝ իրազեկելու ՁԼՄ-ներին և ՀԿ-ներին ստուգարքի թափանցիկությունն իրականում ապահովելու նպատակով:
- Սոցիալական հոլովակների միջոցով բարձրացնել քաղաքացիների իրազեկվածությունը քվեարկության գաղտնիության վերաբերյալ:

Հանձնաժողովների կազմավորումը

- Ապահովել, որ համապետական ընտրությունների ժամանակ մեկ ընտրատեղամասից ավել ունեցող համայնքներում ընտրատեղամասի վարչական տարածքում բնակվող կամ մասնագիտական գործունեություն ծավալող անձինք (մասնավորապես ընտրատեղամասում գտնվող դպրոցի, մանկապարտեզի և համատիրության աշխատակիցները) ընդգրկված չլինեն հանձնաժողովի կազմում և/կամ հանդես չզան որպես վստահված անձ կամ դիտորդ:
- Ապահովել, որպեսզի նույն կազմակերպությունում/մարմնում աշխատող մեկ անձից ավելի ներկայացված չլինի նույն հանձնաժողովում՝ բացառելու շահերի բախումը:
- Իրականացնել ծառայողական քննություններ հանձնաժողովի անդամների և նախագահների կողմից կատարված այն խախտումների վերաբերյալ, որոնք հանցակազմ չեն պարունակում և հրապարակել դրանց արդյունքները:
- Նախատեսել, որ ընտրական և ընթացակարգային խախտումներ կատարած հանձնաժողովի անդամները զրկվեն որակավորումից և հաջորդող ընտրություններին հանձնաժողովի անդամ/նախագահ լինելու հնարավորությունից:
- Բարձրացնել հանձնաժողովների անդամների և նախագահների վերապատրաստման մակարդակը և խստացնել որակավորում ստանալու պահանջները:

Դիտորդների և վստահված անձանց իրավունքները

- Ամրագրել դիտորդի և վստահված անձի կողմից գրանցամատյանում խախտումների մասին ինքնուրույն գրառում կատարելու կարգը:
- Ընդլայնել դիտորդի իրավունքները վերջիններիս վերապահելով վերահաշվարկի դիմում ներկայացնելու իրավունք, եթե դիտորդություն իրականացնելիս նրանք արձանագրել են խախտումներ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա:
- Օրենքով թույլատրել նույն կազմակերպությունը ներկայացնող երկու դիտորդի միաժամանակ ներկայությունը ընտրատեղամասում:
- Ապահովել վստահված անձանց վկայականների միանմանությունը, և նմուշը փակցնել այլ նմուշների կողքին:

Բացի այդ, անդրադառնալ և ի կատար ածել միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանին մինչ օրս արված առաջարկությունները: